«Վան» գործողություն: «Վան» գործողության մարտիկների դատավարություն: Ներկայացված նյութը վերցված է «Հայերի դատը Փարիզի երդվյալների ատյանում» գրքից, թարգմանիչ՝ Գրիգոր Ջանիկյան:

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ ՓԱՐԻԶԻ ԵՐԴՎՅԱԼՆԵՐԻ ԱՏՅԱՆՈՒՄ

ԹԱՐԳՄԱՆԻՉ ԳՐԻԳՈՐ ՋԱՆԻԿՅԱՆ

(Նախաբանի փոխարեն)

1981 թվական: Սեպտեմբերի 24: Փարիզ: Քսանից քսանչորս տարեկան չորս հայ երիտասարդներ գրոհում են Հոսման պողոտայի վրա գտնվող թուրքական հյուպատոսարանն ու գրավելով, մոտ վաթսուն հոգու պատանդ վերցնում: Սկսվում է Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ԱՍԱԼԱ) «Եղիա Քեշիշյան» մարտախմբի «Վան» գործողությունը: Փոխհրաձգության ժամանակ հյուպատոսարանի թուրք հսկիչ-պահապանը սպանվում է, երկու հայ գրոհային՝ Վազգեն Սիսլյանն ու Հակոբ Ջուլֆայանը վիրավորվում, հիվանդանոց են տեղափոխվում: Սակայն նրանց մարտընկերներ՝ Գեւորգ Գյուզելյանն ու Արամ Բասմաջյանը պաշարումը շարունակում են եւ երկար բանակցություններից հետո համաձայնվում են պատանդներին բաց թողնել միայն պայմանով, որ իրենց նկատմամբ քաղաքական դատ տեղի ունենա:

Ահա՛ այդպես պատահեց, որ Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունից վաթսուն տարի հետո, Եվրոպայի խոշորագույն մայրաքաղաքում, փաստորեն, քաղաքական դատ տեղի ունեցավ, որի ընթացքում վերարծարծվեց 1915 թվականի ցեղասպանությունը, բացահայտվեց թուրքական իշխանությունների անժամկետանց ոճիրը եւ նույնիսկ հատուցման հարց հարուցվեց: Փարիզի երդվյալների ատյանում, որի նիստերը մեկ շաբաթից ավելի տեւեցին, ելույթ էին ունենում ոչ միայն չորս հայ վրիժառուները, նրանց մայրերը, այլեւ հայ եւ թուրք պատմաբաններ, քաղաքագետներ, իրավաբաններ, ցեղասպանության վերապրողներ: Մեղադրյալները՝ Վազգեն Սիսլյանը, Գեւորգ Գյուզելյանը, Արամ Բասմաջյանը, Հակոբ Ջուլֆայանը ըստ էության մեղադրողներ էին դարձել, բացատրում էին, որ իրենք ոճրագործներ չեն, այլ արդարության մարտիկներ, որովհետեւ աշխարհին ցանկացել են հիշեցնել դարասկզբի մեծագույն հանցագործությունը եւ այն, որ պատասխանատուները մինչեւ հիմա չեն դատապարտվել, զոհերը հատուցում չեն ստացել: «Վան» գործողության

մասնակիցները հասան իրենց նպատակին: Դատավարության ընթացքում եւ դատավարությունից հետո երկար ժամանակ Հայկական հարցը միջազգային լրատվության թիվ մեկ նորությունն էր, որին լայնորեն արձագանգում էին գրեթե բոլոր երկրների մամուլը, ձայնասփյուռը, հեռատեսիլը: Գրեթե բոլոր երկրների, բացի… Խորհրդային Հայաստանից: Հայրենիքը, այդ տարիներին, հասկանալի պատճառով, լռության մատնեց իր չորս խիզախ զավակների անձնասպանական բռնարարքը: Բարեբախտաբար փոխվել են ժամանակները, Ֆրանսիայից Հայաստան է հասել այդ պատմական դատավարության ատենագրությունը, որը եւ համառոտ թարգմանությամբ ուզում ենք ներկայացնել ընթերցողի ուշադրությանը:

Հենց թեկուզ այն բանի համար, որ պարզ դառնա, թե ինչու «Եղիա Քեշիշյան» մարտախմբի անդամները, ճիշտ է, յոթական տարվա բանտարգելության դատապարտվեցին, բայց ցուցամատներն ու միջնամատները լայն բացած, վեր պարզած դուրս եկան դատարանի դահլիճից:

Մի երկու խոսքով տեղեկացնենք, թե ինչ կերպ դասավորվեց հայ ազատամարտիկների կյանքը հետագա տարիներին:

Բանտարգելության վերջին տարում Արամ Բասմաջյանը բանտախցամ կախեց իրեն, չնայած մինչ այդ երկու անգամ ընկերները կանխել էին նրա նման փորձերը: Այժմ նա հանգչում է Պեր-Լաշեզի գերեզմանոցում՝ Անդրանիկի մահարձանից ոչ հեռու:

Մյուս երեքից երկուսն արդեն հայրենիքում են: Վազգեն Սիսլյանն ամուսնացավ, ընտանիք կազմեց: Հակոբ Ջուլֆայանը գաղտնի ոստիկանության մշտական հսկողությունից ձերբազատվելու համար հասավ Կանադա, ապաստանեց այդ հեռավոր երկրում, բայց տասներկու տարի անց կառավարությունը բացահայտեց նրա «ահաբեկչական» անցյալը, դուրս վտարեց: Ընտանիքով հանդերձ: Նա եկավ իր Հայրենիքը: Իսկ Գեւորգ Գյուզելյանը կազմավորեց «Մեծ Մուրադ» ջոկատն ու մեծագույն նվիրումով մասնակցեց Արցախի ազգային-ազատագրական պատերազմին: Այժմ նա ապրում է ԱՄՆ-ում:

Նշանակալից է, որ միջազգային մամուլի վկայությամբ՝ «համաշխարհային կարծիքը զարթնեցրած, սփյուռքի օտարամետ հայությանն արմատներին վերադարձրած» գործողության մասնակիցները հայրենիքում անցյալի «փառքը» չեն շահարկում: Նրանք, ինչպես միշտ, անաղմուկ են ու աննկատ, ինչպես միշտ՝ հավատում են իրենց նպատակների իրագործմանը:

Իրավացի է ֆրանսահայ հոգեվերլուծող ժիլ Լուսակը, որն իր նոր գրքում հավաստում է, որ ցեղասպանությունից չեն բուժվում, յուրաքանչյուրը յուրովի է արտահայտում կորստի, վշտի, վրեժի զգացումը:

Մի ավելացում միայն՝ ցեղասպանությունից, ամենայն հավանականությամբ, բուժվում է միայն այն ժողովուրդը, որը հատուցման է հասնում: